**ՀՀ Պաշտպանության Նախարարության**

**«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-22-9/44» ծածկագրով**

**մրցույթի գնահատող հանձնաժողովին**

Պարզաբանական հարցում

Հարգելի գործընկերներ:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ Հրավերի թիվ 11-րդ չափաբաժնով պահանջվող <<Նշտարի սայր տարբեր չափերի>> անվանումով ապրանքի համար տեխնիկական բնութագրում գրված են N11, N15 և N22 չափերը, որի դեպքում այդ չափերը համարվում են առանձին ապրանքատեսակներ և որոնք Հրավերում պետք է գրվեն առանձին չափաբաժիններով՝ այնպես, ինչպես գրված են Հրավերի թիվ 9-րդ և թիվ 10-րդ չափաբաժիններով պահանջվող <<Ինտուբացիոն խողովակի>> տարբեր չափերը, ինչպես նաև Հրավեր թիվ 12-14-րդ չափաբաժիններով պահանջվող <<Կատետր երակայինի>> տարբեր չափերը:

3 տարբեր չափերի նշտարների սայրերի միավորելը Հրավերի թիվ 11-րդ չափաբաժնում արհեստական խոչընդոտներ է հարուցում այդ տարբեր չափերի նշտարները ունեցող և մրցույթին հնարավոր մասնակից համարվող կազմակերպությունների՝ այդ թվում նաև համար, որը այս պահին էլ ունի այդ բոլորից չափերից (ինչպես նաև N10 N15C, N21, N22, N23, N24, N25 չափերի նշտարի սայրերից) և պատրաստ է ցանկացած պահի անմիջապես մատակարարել ցանկացած չափերի նշտարի սայրերի ցանկացած քանակները:

Հարգելի գործընկերներ:

Խնդրում եմ պատասխանել հետևյալ պարզաբանական հարցումին՝

Ձեզ համար ընդունելի կլինի այն տարբերակը, եթե կողմից առաջարկվող նշտարի սայրերը ունենան հետևյալ պարամետրները՝

N11 չափի պիտանելիության ժամկետի ավարտը՝ 11-2025թ., ունի CE;

N15 չափի պիտանելիության ժամկետի ավարտը՝ 11-2025թ., ունի CE;

N22 չափի պիտանելիության ժամկետի ավարտը՝ 03-2024թ., չունի CE: